ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

192-19

« 08» նոյեմբերի 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 39 որոշումը:

Առդիր 2 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 08 » նոյեմբերի 2019 թվականի N 39

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԴԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 35- րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ և 43-րդ հոդվածներով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագիծը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի 06-103-0061-0002 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող կառուցապատված մակերեսով քաղաքացի Սուսաննա Սերյոժայի Սարդարյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունները՝ պահեստը՝22,35 քառ. մետր,օժանդակ շինությունը՝ 8,07 քառ. մետր և սանհանգույցը՝ 2,5 քառ. մետր ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ գյուղատնտեսական նշանակության 0,013826 հա մակերեսով

հողամասը, դրանց նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության Վահագնի համայնքի սեփականության իրավունքը:

2. Ուժը կորցրած ճանաչել Վահագնի համայնքի ղեկավարի 2019 թ.-ի հոկտեմբերի 21-ի << Գյուղատնտեսական նշանակության հողամասի և հողամասում քաղաքացի Սուսաննա Սարդարյանի կողմից ինքնակամ կառուցված շինության նկատմամբ Վահագնի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, այն օրինականացնելու մասին>> N 35 որոշումը,

3. Ընդունել ի գիտություն, որ ինքնակամ շինությունները գտնվում են Մ-6 Վանաձոր – Ալավերդի – Վրաստանի սահման միջպետական ճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 2017 թ.-ի նոյեմբերի 9-ի թիվ 1412-Ն որոշմամբ բացառիկ գերակա շահ ճանաչված հողամասի վրա և նույն ծրագրի շրջանակներում ենթակա է քանդման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ